

ԱՊՊԱ ՈՒՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐՋԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Արևիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գավառի պետ. համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս

Բանալի բառեր. ապահովագրություն, ԱՊՊԱ, բարեփոխում, Բոնուս-Մալուս, ուղիղ հատուցում, ապահովագրական գումար, անձնական վնաս, գույքային վնաս

Հայտնի է, որ ՀՀ-ում ապահովագրական գործունեության օրենսդրության հիմքում ընկած է ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (ՀՀ ՔՕ, գլուխ 54) և Ապահովագրության մասին ՀՀ օրենքը: Անշուշտ, ապահովագրական գործունեությունը կարգավորվում է նաև այլ օրենքներով ու տարբեր ենթաօրենսդրական ակտերով: Այս համատեքստում ուշաբժան է ԱՊՊԱ ոլորտի վերջին բարեփոխումների ուսումնասիրությունը:

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին ՀՀ օրենքն (այսուհետ՝ Օրենք) ընդունվել է 2010թ. մայիսի 10-ին¹, որի գլխավոր պահանջն է. ՀՀ տարածքում 2011թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվառված ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերը պարտավոր էին ունենալ Օրենքով սահմանված կնքված ԱՊՊԱ պայմանագրեր (Հոդված 54): Այսպիսով, Օրենքի պահանջով, ՀՀ-ում շահագործվող և պարտադիր ապահովագրության ենթակա բոլոր ավտոտրանսպորտային միջոցները պետք է ունենան գործող ԱՊՊԱ պայմանագրեր: Սակայն պարտադիր ապահովագրման ենթակա չէ հետևյալ տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը. 1) առավելագույն արագությունը 50 կմ/ժ-ը կամ շարժիչի ծավալը 50 սմ³-ը չգերազանցող ավտոտրանսպորտային միջոցներ. 2) միայն հատուկ վայրերում օգտագործվող մարզական կամ ժամանցի նպատակով օգտագործվող միջոցները՝ միայն այդ վայրերում օգտագործելու դեպքում. 3) բացառապես ոչ ընդհանուր օգտագործման ավտոձանապարհներով երթևեկելու համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոցներ. 4) ՀՀ տարածք առանց վարելու ներմուծվող ավտոտրանսպորտային միջոցներ՝ մինչև ՀՀ տարածքում դրանց օգտագործումը (Հոդված 25): Սույն Օրենքի ընդունման հիմնական նպատակն էր, որ պատահարներից տուժած ցանկացած անձ ստանա վնասների փոխահատուցում՝ անկախ վարորդի կամ տրանսպորտային միջոցի տիրոջ ֆինանսական հնարավորություններից: 10-րդ հոդվածով սահմանված է, որ ԱՊՊԱ պայմանագրով պարտադիր ապահովագրման ենթակա է այն քաղաքացիական պատասխանատվությու-

¹Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին ՀՀ օրենք, 2010 թ. մայիսի 10:

նը, որը բխում է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործմամբ տուժողին պատճառված հետևյալ վնասներից. 1)անձնական վնասներ՝ տուժողի առողջությանը պատճառված վնասներ և դրանց հետևանքով կորցրած եկամուտներ, տուժողի մահ, 2)գույքային վնասներ: Հայտնի է, որ վթարների հետևանքով տուժողները կրում են թե անձնական, թե գույքային վնասներ, քիչ չեն դեպքերը, երբ տուժողների մոտ առաջանում են հիմնական կամ ժամանակավոր անաշխատունակության խնդիրներ, նաև արձանագրվում են մահվան ելքով դեպքեր և 10-րդ հոդվածից ակնհայտ է դառնում, որ ԱՊՊԱ համակարգի ներդրումը միտված էր առավել արդյունավետ եղանակով, ապահովագրական գումարով փոխհատուցել տուժողների կրած բոլոր անձնական և գույքային վնասները: Օրենքով սահմանված է նաև, որ ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրական գումարը մեկ ավտոտրանսպորտային միջոցի հետ կապված մեկ ապահովագրական պատահարի համար չպետք է պակաս լինի՝ ա.Անձնական վնասների դեպքում 3.000.000 ՀՀ դրամից՝ ըստ տուժողի, և 9.000.000 ՀՀ դրամից՝ ըստ յուրաքանչյուր պատահարի: Բ. Գույքին պատճառված վնասների համար՝ 1.500.000 ՀՀ դրամ գումարից՝ ըստ պատահարի: Եթե հատուցման ենթակա գույքին պատճառված վնասներ են կրել մեկից ավելի անձինք և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր պատահարի ապահովագրական գումարը, ապա այդ անձանցից յուրաքանչյուրին հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց գույքին պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր պատահարի սահմանված գումարի սահմաններում: Օրենքի պահանջ է նաև (Հոդված 7, 6-րդ կետ), որ Բյուրոյի խորհուրդը, ելնելով ավտոտրանսպորտային միջոցների և դրանց սեփականատերերի տվյալներից և նրանց գործողությունների հետևանքով տեղի ունեցած ապահովագրական պատահարների և թույլ տրված խախտումների քանակից և բնույթից (վարորդական պատմություն), սահմանում է ապահովագրավճարների գեղչերի և հավելավճարների համակարգ (Բոնուս-Մալուս համակարգ) և դրա կիրառման կարգը:²

Օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված է նաև, որ ապահովագրավճարների գեղչերի և հավելավճարների համակարգը (Բոնուս-Մալուս համակարգ) կիրառվում է 2013թ. հունվարի 1-ից հետո կնքված ԱՊՊԱ պայմանագրերի նկատմամբ:³ Նշված պահանջի ավելի ուշ կիրառումը պայմանավորված էր այն հանգամանքով, որպեսզի Բյուրոն և ապահովագրական ընկերությունները բավարար տեղեկատվություն հավաքագրեին ապահովա-

² Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո Իրավաբանական Անձանց Միության ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ, 26.09.2016թ., Բյուրոյի թիվ 37-Լ որոշմամբ:

³ www.appa.am

գրական պատահարների վերաբերյալ, ունենային համապատասխան վնասների պատմությունը և դրա հիման վրա հնարավորություն ունենային հիմնավորելու Բոնուս-Մալուս համակարգի համար կիրառելի գործակիցները:

ԱՊՊԱ համակարգի ներդրումից ի վեր, համապատասխան ենթակառուցվածքների ներդրմանը և զարգացմանը զուգահեռ (վնասների գնահատում, պատճառի փորձաքննություն և այլն) իրականացվել են նաև մի շարք բարեփոխումներ՝ ի օգուտ ավտոտրանսպորտային միջոցներ շահագործողների: Մասնավորապես 2013թ. հունվարի 1-ից Օրենքի պահանջի համաձայն Ավտոապահովագրողների բյուրոյի կողմից ներդրվել է Բոնուս-Մալուս համակարգը: Այն իրենից ներկայացնում է ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների գեղչերի և հավելավճարների համակարգ, համաձայն որի՝ ԱՊՊԱ պայմանագրով սահմանվող ապահովագրավճարը հաշվարկվում է ապահովադրի ապահովագրական պատմության հիման վրա: Ի դեպ մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը Բոնուս-Մալուս համակարգը հիմնված է եղել Ապահովադիրների և վարորդների ապահովագրական պատմության վրա հիմնված երկգործոնային համակարգի վրա: 2016 թվականի սեպտեմբերի 1-ից ԱՊՊԱ ոլորտում անցում է կատարվել առավել պարզ՝ միայն Ապահովադիրների վրա հիմնված համակարգին:

2017թ. ապրիլի 1-ից ԱՊՊԱ ոլորտում ներդրվել է նաև ուղիղ հատուցումների համակարգը: Այսինքն ավտովթարների դեպքում տուժող ավտոսեփականատերերն ապահովագրական հատուցում ստանալու համար պետք է դիմեն իրենց հետ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերություններին: Մինչև նշված համակարգին անցնելը ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերն ԱՊՊԱ պայմանագրեր էին ձեռք բերում իրենց նախընտրած ապահովագրական ընկերությունից: Սակայն պատահարների ժամանակ տուժողի կարգավիճակ ունենալու դեպքում, անհրաժեշտ է, որպեսզի դիմեին մեղավոր մեքենան ապահովագրած ընկերություն՝ հատուցում ստանալու համար: Ուղիղ հատուցման համակարգի ներդրումից հետո ապահովագրական ընկերությունները սահմանված կարգով կհատուցեն իրենց հետ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ավտոմեքենաների սեփականատերերին պատճառված վնասները, որից հետո վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունների հետ կիրականացնեն փոխհաշվարկներ՝ սահմանված չափերով հետ ստանալով իրենց կողմից հատուցված գումարները: Այսպիսով, նշված համակարգը հնարավորություն է տալիս ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերին ԱՊՊԱ պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում գործ ունենալ միայն իրենց կողմից նախընտրած ապահովագրական ընկերության հետ:

Հարկ է նշել նաև, որ 2017թ. Ապրիլի 1-ից հետո կրճատվել են հատուցման գործընթացների տևողությունները: Մասնավորապես նախկինում պարզեցված հատուցման գործընթացների կարգավորման համար նախատեսված էր նվազագույնը 9-ը, իսկ առավելագույնը 81 օր, իսկ փոփոխությունից հետո Ստանդարտ հատուցման գործընթացների կարգավորման համար նախկինում սահմանված էր նվազագույնը 16, իսկ առավելագույնը 119 օր, իսկ փոփոխությունից հետո հիշյալ ժամկետները սահմանվել են՝ համապատասխանաբար 10-ը և 41 օր: Նշված ժամկետները հաշվարկելիս հաշվի են առնվել հատուցման գործընթացում հնարավոր բողոքների ժամկետները:

2017թ.-ի ապրիլի 1-ից հետո էական փոփոխություններ են կատարվել նաև ապահովագրական գումարների համատեքստում՝ ապահովագրական պատահարի հետևանքով հատուցման ենթակա առավելագույն սահմանաչափերը: Մասնավորապես՝ մինչև փոփոխությունը անձնական վնասների համար մեկ պատահարի դեպքում 1 տուժողի համար սահմանված էր 3,300,000 ՀՀ դրամ, 1 պատահարի դեպքում բոլոր տուժողների համար՝ 10,000,000 ՀՀ դրամ, փոփոխության արդյունքում՝ անձնական վնասների համար մեկ պատահարի դեպքում 1 տուժողի համար սահմանվել է 3,300,000 ՀՀ դրամ, 1 պատահարի դեպքում բոլոր տուժողների համար՝ 33,000,000 ՀՀ դրամ: Գույքային վնասների դեպքում, մինչև փոփոխությունը գործում էին հետևյալ սահմանաչափերը՝ մեկ պատահարի դեպքում 1 տուժողի համար 1,800,000 ՀՀ դրամ, 1 պատահարի դեպքում բոլոր տուժողների համար՝ 1,800,000 ՀՀ դրամ, փոփոխության արդյունքում՝ գույքային վնասների համար մեկ պատահարի դեպքում 1 տուժողի համար 1,800,000 ՀՀ դրամ (մեկից ավելի տուժողների դեպքում կիրառվում է համամասնություն), 1 պատահարի դեպքում բոլոր տուժողների համար՝ 18,000,000 ՀՀ դրամ:

Հարկ է նշել, որ ԱՊՊԱ համակարգի բոլոր բարեփոխումները կատարվել են ավտոմատացված գործողների Բյուրոյի կողմից ընդունված կանոնների համաձայն: Վերջին բարեփոխումների համատեքստում պրոգրեսիվ քայլեր էին Բոնուս-Մալուս համակարգի ներդրումը, ուղիղ հատուցումների համակարգի ներդրումը, ապահովագրական գումարների սահմանաչափերի ավելացումը, դեպքի վայր ժամանելու ժամկետների կրճատումը, ինչպես նաև հատուցման գործընթացի կազմակերպման անհրաժեշտ ժամկետների կրճատումը: Այսպիսով, Օրենքը հնարավորություն է տալիս ԱՊՊԱ ոլորտի զարգացմանը զուգահեռ, իրականացնել անհրաժեշտ բարեփոխումներ՝ առավել ձկուն, արդյունավետ և արագ եղանակով՝ խուսափելով անընդհատ փոփոխությունների և լրացումների կատարել Օրենքում:

Արևիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՊՊԱ ոլորտում իրականացված վերջին բարեփոխումները ՀՀ-ում

Բանալի բառեր: Ապահովագրություն, ԱՊՊԱ, բարեփոխում, Բոնուս-Մալուս, ուղիղ հատուցում, ապահովագրական գումար, անձնական վնաս, գույքային վնաս

ԱՊՊԱ համակարգի ներդրման մեկնարկը ՀՀ-ում տրվել է դեռևս 2010թ. -ից՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին ՀՀ օրենքի ընդունմամբ: Առ այսօր՝ համակարգի կայացմանը զուգահեռ, ԱՊՊԱ համակարգում արձանագրվել են մի շարք բարեփոխումներ, որոնք դրական արձագանք են գտել համակարգի շահառուների շրջանակում: Նշված Օրենքի ճկունությունը և ներդրված համակարգի մոդելը հնարավորություն է ընձեռում իրականացնել շարունակական բարելավումներ և առկա խնդիրների կարգավորումներ ԱՊՊԱ ոլորտում՝ հնարավորինս արագ և արդյունավետ կերպով:

Արևիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Latest reforms implemented in CMTPL insurance in Armenia

Key words: insurance, MTPL, reform, Bonus-Malus, direct indemnity, sSum insured, personal injury, property damage

The launch of the introduction of the CMTPL Insurance system in Armenia has been given since 2010 with the adoption of the RA Law on Compulsory Insurance of Liability arising from the Use of Motor Vehicles. Up to day, along with the establishment of the system, a number of reforms have been recorded in the CMTPL Insurance system, which has been positively responded by the system beneficiaries. The mentioned Law's flexibility and embedded system model enable continuous improvements and solution to the current issues in CMTPL Insurance, as quickly and efficiently as possible.

Արևիկ ԱՐՄԻՍՅԱՆ

Последние реформы, реализованные в области ОСАГО в Армении

Ключевые слова: Страхование, ОСАГО, реформ, Бонус-Малус, прямая возмещение, страховая сумма, личный вред, вред причиненный имуществу

Начало внедрения системы ОСАГО в РА было положено еще с 2010 года: принятием Закона об «Обязательном страховании ответственности, вытекающей из использования автотранспортных средств». До сих пор, параллельно установлению системы, в системе ОСАГО зафиксирован ряд реформ, которые нашли положительный отклик среди бенефициариев системы. Гибкость упомянутого закона и модель внедренной системы дает возможность реализовать реформы и решать возникающие проблемы в области ОСАГО: насколько возможно быстро и эффективно.